

10.57192/18291864-2024.2-248

Հրանտ Ռ. Օհանյան  
Պատմ. գիտ. թեկնածու

ՄԻՔԱՅԵԼ ՍԱԼԼԱՆԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԴՐՎԱԳՆԵՐ  
ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՁԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ\*

**Բանալի բառեր** – Մատենադարանի արխիվային վավերագրեր, Լազարյաններ, Եփրեմ Ա Ձորագեղցի, Հովհաննես Ը Կարբեցի, Ներսես Աջտարակեցի, հոգևոր ոլորտ, գիտամանկավարժական գործունեություն, դասագիրք, մատենագրություն:

Մուտք

Թեև հայ պատմագրության մեջ որոշ անդրադարձներ կան<sup>1</sup> Լազարյան ճեմարանի տեսուչ (1822-1826) և ուսուցիչ (1822-1838), լեզվաբան, հոգևոր գործիչ Միքայել (Հովակիմ) Սալլանյանի (1782-1851) գործունեու-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 26.05.2024:

<sup>1</sup> Տե՛ս **Երիցեան Ա.**, Պատմություն 75-ամեայ գոյությունից Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, հատոր Ա. (1824-1850), Թիֆլիզ, 1898, էջ 38-39, **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ., Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., 2001, սյունակ 4011-4012, **Լեո**, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 15-18, **Շահազիզ Ե.**, Միքայել վարդապետ Սալլանյան, «Էջմիածին», 1946, N Բ-Գ, 41-47, **Թաղէոսեան Յ.**, Պատմություն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելքեան լեզուաց, Վիեննա, Միսիթարեան տպարան, էջ 312-315, **Գիլոյան Վ. Ա.**, Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Եր., ԳԱ հրատ., 1966, էջ 208-211, **Իգնատյան Ա. Հ.**, Լազարյան ճեմարան, Եր., ԵՊՀ հրատ., 1969, էջ 166-171:

թյանը<sup>2</sup>, այնուամենայնիվ, Մատենադարանում պահպանվող արխիվային բազմաթիվ վավերագրերը նոր լույս են սփռում նրա կյանքի և գործունեության մի շարք ուշագրավ դրվագների վրա:

Կոստանդնուպոլսում ծնված և Լիբանան տեղափոխված Միքայել<sup>3</sup> Սալլանթյանն իր գործունեությունը սկսել է Անտոնյան դիվանում, եղել միաբանության անդամ<sup>4</sup>: Այնուհետև մեկնել է Ղրիմ՝ հայ կաթոլիկների մոտ քարոզչություն անելու, այնտեղից էլ՝ Կովկաս, ապա՝ Մոզդոկ<sup>5</sup>: Հենց այդ տարիներին էլ, երբ կաթոլիկ պատարագների ժամանակ սկսում է գործածել հայերենը, դրսևորվում է նրա նվիրվածությունը մայրենի լեզվին<sup>6</sup>:

Հայտնի է, որ Մոզդոկում գտնվող Մ. Սալլանթյանին Լազարյանները 1816 թ. հրավիրում են Մոսկվա՝ ձեմարանում դասավանդելու<sup>7</sup>: Սակայն իսկույն ևեթ հակասություններ են ծագում լատինադավան հոգևորականի և ձեմարանի ուսուցիչ Հարություն Ալամդարյանի միջև, ինչի արդյունքում, տեղի տալով նաև հայ հոգևորականության և անձամբ ռուսահայոց թեմակալ առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գառնակերյանի (1811-1829) հորդորներին, Լազարյանները հեռացնում են նրան ձեմարանից<sup>8</sup>: Այդուհանդերձ, 1822 թ. նրան կրկին հրավիրում են՝ այս անգամ վստահելով ձեմարանի տեսուչի (ռեկտոր) և հայագիտական առարկաների ուսուցչի պաշտոնը: Նա սկսում է դասավանդել հայ գրականություն, պատմություն, աստվածաբանություն, թուրքերեն և այլ առարկաներ<sup>9</sup>: Կարելի էր, իհարկե, ակնկալել, որ Միքայել Սալլանթյանին երիցս հրավիրելով ձեմարան՝ Լազարյանները կփորձեին վերացնել նրա՝ նախկինում լատինադա-

<sup>2</sup> Տե՛ս Թադևոսեան Յ., Պատմություն Լազարեան տոհմի եւ Լազարեան ձեմարանի, Վիեննա, 1953, էջ 312:

<sup>3</sup> Անունը եղել է Մարկոս, ձեռնադրվելուց հետո՝ Հովակիմ, հայ առաքելական եկեղեցու վարդապետ դառնալուց ընդունել է Միքայել անունը:

<sup>4</sup> Անտոնյան միաբանությունն իր շուրջ երկուհարյուրամյա (1707-1925) գործունեության ընթացքում ակտիվ դեր է խաղացել հայության և հայ կաթոլիկ համայնքի կյանքում, տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Բ., Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., 2001, սյունակ 3279-3283, **Տաճատ Հ. վրդ. Եարտրմեան**, Անտոնեան հայ Միաբանությունը եւ անոր պատմական տխուր վախճանը 1707-1925, «Բազմավէպ», Վենետիկ, 2000, N 1-4, էջ 110-127:

<sup>5</sup> Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ., սյունակ 4011:

<sup>6</sup> Տե՛ս **Շահազիզ Ե.**, Միքայել վարդապետ Սալլանթյան, «Էջմիածին», 1946, N Բ-Գ, էջ 42-43:

<sup>7</sup> Տե՛ս **Գիլոյան Վ. Ա.**, Լազարյան ձեմարանի հիմնադրման պատմությունից, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, N 7, էջ 64:

<sup>8</sup> Տե՛ս **Գիլոյան Վ. Ա.**, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), էջ 208-210:

<sup>9</sup> Տե՛ս **Իգնատյան Ա. Հ.**, Լազարյան ձեմարան, էջ 169:

վան լինելու պատճառով հարուցված խնդիրները: Լազարյան ճեմարանում ոչ միայն դասավանդելու, այլև փաստացի հայագիտությունն առաջնորդելու հեռանկարը և ուսուցչական ու ստեղծագործական լայն հնարավորությունները որոշիչ են դառնում հոգևորականի որոշման համար:

## 1. Կաթողիկ հայ ուսուցչի դարձի հարցը

Լազարյաններն, ի թիվս այլ համագգային գործերի, ստանձնում են նաև խոստումնալից մանկավարժի հովանավորությունը և նրան Հայ առաքելական եկեղեցի բերելու գործը: Ակներն է, որ, հանձին Միքայել Սալլանթյանի, նրանք տեսնում էին Լազարյան ճեմարանի մտավոր ներուժը գորացնելու մի նոր հնարավորություն, որով և բացատրելի է հայ մանկավարժի նկատմամբ նրանց ցուցաբերած աներկբա աջակցությունը: Նշենք, որ հայ հոգևորականի կյանքի տվյալ շրջանի վերաբերյալ անդրադարձներ առանձնապես չկան, մինչդեռ հիշյալ իրադարձություններն են վճռորոշ եղել մանկավարժի հետագա ողջ գործունեության համար:

Մատենադարանի արխիվային վավերագրերից երևում է, թե տվյալ գործը հաջողելու համար ինչպիսի ջանքեր են գործադրել Լազարյանները՝ դիմումներ հղելով Վիրահայոց թեմակալ առաջնորդ Ներսես Աշտարակեցուն (1814–1828 թթ.) և Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցուն (1809–1830 թթ.): Մասնավորապես՝ այդ է վկայում 1822 թ. դեկտեմբերի 12-ին Ներսես Աշտարակեցուն գրած Հովակիմ Լազարյանի (1743–1826) այն նամակը, որում, ի թիվս այլ հարցերի, նա խնդրում է լատինադավան հայ հոգևորականի համար միջնորդել Եփրեմ կաթողիկոսին. «լատինահայ Յովակիմ անուն կրօնաւոր ոմն, զոր վեց ամօք յառաջ հրաւիրեալ էր իմ ի դասատուութիւն աշակերտաց դպրոցիս և ապա վասն ինչ-ինչ պատճառաց արձակեալ, յայսմ սեպտեմբերի եկեալ ի քաղաքս և միանգամ և երկիցս մուտ և ել արարեալ առ իս, ծանոյց ինձ անպատրուակ զցանկութիւն մտանելոյ իւրոյ ի պաշտօն դպրոցիս և ապա բացայայտեաց և զգովանի փափաք իւր վերստին Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ զանձն իւր յորդէգրութիւն ընծայելոյ»<sup>10</sup>: Ինչպես երևում է՝ Լազարյանները դեռ ամիսներ առաջ էին այդ հարցով դիմել կաթողիկոսին, բայց արդեն ակնկալում էին, որ Ներսես եպիսկոպոսն իր հեղինակավոր խոսքն ասեր այդ գործը կյանքի կոչելու հարցի առնչությամբ<sup>11</sup>: Հարկ է

<sup>10</sup> ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 18, թ. 2 ա:

<sup>11</sup> Տե՛ս ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 18, թ. 2 բ:

նշել, որ Ներսես Աշտարակեցին անձամբ էր ճանաչում Միքայել Սալլանթյանին. նրանք դեռևս 1815 թ. էին հանդիպել Թիֆլիսում<sup>12</sup> և, ինչպես փաստում են վավերագրերը, նամակագրական կապ էին պահպանել նաև հետագա տարիներին<sup>13</sup>: Հետագայում, երբ Ներսես Աշտարակեցին կարգվում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմակալ առաջնորդ, անգամ ջանում է Միքայել Սալլանթյանին հրավիրել Քիշնև՝ այնտեղի դպրոցում դասավանդելու<sup>14</sup>:

Սակայն նշենք, որ այս անգամ էլ Միքայել Սալլանթյանը տարածայնություններ է ունենում ձեմարանի տեսուչ Սերովբե վրդ. Կարնեցու (1815–1822 թթ.) հետ, ինչը կրկին դժվարին իրավիճակ է ստեղծում Լազարյանների համար: Բայց և այնպես, նախորոշելով ձեմարանի հետագա զարգացման ուղին, նրանք նախապատվությունը տալիս են Միքայել Սալլանթյանին: Այդ որոշման մասին է, որ 1823 թ. փետրվարի 2-ին Խաչատուր Լազարյանը (1789–1871) գրությամբ հայտնում է Ներսես Աշտարակեցուն. «զՅովակիմ լատինահայ կրօնաւորն Սալլաթեան ընկալաք ի դպրոցս ի վարժապետութիւն հայկաբանութեան և գորովագութ հայր իմ յոյժ հաճեալ է ընդ նա, իսկ զՍերովբէ գերապատիւ վարդապետ մեր առաքենք ի Պետրբուրգ առժամանակ մի, մինչև տեսցուք, թէ զի՞նչ տնօրինեսցէ Աստուած յապայն»<sup>15</sup>:

Բայց և այնպես, ձեմարանի հետագա անցնցում գործունեության համար շարունակում էր խնդրահարույց մնալ ուսուցչի՝ լատինադավան լինելու հանգամանքը: 1823 թ. հոկտեմբերի 19-ին Միքայել Սալլանթյանը, ամենայն հավանականությամբ Լազարյանների հորդորով, այս անգամ էլ ինքն է դիմում Ներսես Աշտարակեցուն՝ ծավալուն նամակում ներկայացնելով իր ծանրակշիռ փաստարկները: Ընդամին՝ պարզվում է, որ Լազարյանները նախ փորձել են տեղում լուծել հարցը. «սոքա (Լազարյանները –

<sup>12</sup> Տե՛ս **Երիցեան Ա.**, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, էջ 38:

<sup>13</sup> Նամակագրությունը վերաբերում է ամենատարբեր հարցերի, ինչպես, օրինակ՝ ավետարանական միսիոներների գործունեությանը (տե՛ս **Հակոբյան Ն. Ա.**, Միքայել արքեպիսկոպոս Սալլանթյանի նամակը Ներսես Աշտարակեցուն, «Պատմություն եւ մշակույթ», N 2 (20), Եր., 2023, էջ 187–192): Հասկանալի է նաև 1826 թ. սեպտեմբերի 20-ի Ներսես Աշտարակեցու նամակը, որում նա ներկայացնում է ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ռուսական գորքերի հաջողություններն Արցախում, տե՛ս **Մաղալյան Ա. Վ.** Փաստաթղթեր Արցախի գործիչների և Աբբաս-Միրզայի 1826 թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (107), 2006, էջ 7–8, փաստաթուղթ N 5:

<sup>14</sup> 1830 թ. սեպտեմբերի 3-ի Ներսես Աշտարակեցու նամակը Միքայել Սալլանթյանին, տե՛ս ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 121:

<sup>15</sup> ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 19, թ. 1 ա–2 բ:

Հ. Օ.), ծանրակշիռ հեղինակությամբ իւրեանց, միջնորդությամբ մեծամեծաց և տերունական պաշտօնակալաց, հանեալ զիս ի ներքուստ ձեռին լատին միտրօպօլիտին, մուծեցին յեկեղեցի Հայոց»<sup>16</sup>: Բայց առաջ է եկել դրա օրինականացման նպատակով Պետերբուրգ բանագնաց ուղարկելու հարցը, ինչի վերաբերյալ հայտնի է հետևյալը. «զնացեալ աղայ Խաչիկն ի Պետրբուրգ և խորհրդակցեալ ըստ զանազան պաշտօնակալս՝ դարձաւ այսրէն, բերեալ առ մեզ վճիռ այսպիսի. չիք ասէ ինձ այլազգ դիւրագոյն հնար այսր փոփոխութեան, բայց եթէ դու ինքնին գրեսցես խնդիր առ սրբալոյս կաթողիկոսն՝ յայտնելով նմա զամենայն անցս և զպարագայս անձինդ և հայցելով ընդունել զքեզ եկեղեցի հայրենի, յայնժամ կաթողիկոսն մեր, ըստ որում, չէ հպատակ այսր տերութեան, այլ անկախ, ինքնիշխան ազգապետ, տերութեան պարսկաց հպատակ, իւրով բացարձակ իշխանութեամբ հրամայէ թե՛նակալ եպիսկոպոսի տեղոյս սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոսի ընդունել զքեզ յիւր եկեղեցի»<sup>17</sup>: Այդ դեպքում կարիք չէր լինի ստանալ ցարական իշխանությունների («մինիստրի») հաստատումը, ավելին՝ «եթէ զկնի ժամանակաց մինիստրն կամ լատին մետրօպօլիտն լուեալ զայս ամենայն ելցեն ի հարցափորձ իրացս, յայնժամ մեք տացուք պատասխանի նոցա և որովևիցէ հնարիւք ծածկեսցուք զամենայն»<sup>18</sup>:

Այդպիսով՝ անհրաժեշտ էր հայոց հայրապետի հավանությունը, և այդ հարցում Միքայել Սալլանթյանն ակնկալում էր Ներսես Աշտարակեցու աջակցությունը. «յառաքել անդ յետ աուրց ինչ գօրինաւոր խնդրագիր իմ առ սրբալոյս կաթողիկոսն ի շնորհաբաշխ ձեռս Ձեր, ամենայն խնարհութեամբ հայցեն հասուցանել առ նա»<sup>19</sup>: Նամակի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այդ գործում եղել են նաև ընդդիմացողներ, և Լազարյանների միջնորդությունն ու Ներսես Աշտարակեցու աջակցությունը կարող էին նպաստել կաթողիկոսի՝ դրական որոշում կայացնելուն: Խնդրո առարկա հարցում կարևոր փաստարկ է դիտարկվել նաև Միքայել Սալլանթյանի գիտամանկավարժական գործունեության ձեռքբերումները, ինչի առնչությամբ հոգևորականը գրում է. «ի քանի ամաց հետէ ունիմ յօրինեալ գիրս իբր տասն ի զանազան նիւթս, զորս հետզհետէ ձերովդ անվանելի պաշտպանութեամբ ցանկամ տպագրութեամբ ի լոյս ընծայել» և տեղեկացնում է իր կազմած նոր դասագրքի մասին. «որոց

<sup>16</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 45, վավ. 110, թ. 1 ա:

<sup>17</sup> Նույն տեղում, թ. 1 ա-1 բ:

<sup>18</sup> Նույն տեղում, թ. 1 բ:

<sup>19</sup> Նույն տեղում, թ. 2 ա:

միջի առաջինն է քերականություն հայկական լեզուի՝ ամենևին նոր և դիւրըմբռնելի ոճով»<sup>20</sup>:

Կարծում ենք՝ հարկ չկա հիմնավորելու ցարական Ռուսաստանում հայկական կրթական միջավայրի համար նման դասագիրք ունենալու կարևորությունը: Այնինչ, անգամ այդ հանգամանքը, փաստորեն, բավարար չի եղել և, կարելի է կարծել, թե պարզապես անարձագանք է մնացել Ներսես Աշտարակեցու կողմից: Համենայն դեպս՝ դա է վկայում Սալլանթյանի մեկ այլ նամակը, որը նա ամիսներ անց՝ 1823 թ. դեկտեմբերի 6-ին, ուղարկել է ռուսահայոց թեմակալ առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին՝ խնդրելով նաև նրա միջնորդությունը առ այն, որ «արժանի համարեցիք առաքել առ բարձր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսին՝ ընդ նամակիս յանուն նորա, որում առանձինն աղերսաբանեալ իմ, զի և նա յետ ընթեռնւոյն առաքեսցէ առ նոյն սրբալոյս կաթողիկոսն մեր, որպէս զի նա, բացարձակ իշխանութեամբ իւրով, տայցէ կատարումն խնդրոյս իմոյ՝ տալով Ձեզ իշխանութիւն ընդունել զիս յեկեղեցի իմ հայրենի»<sup>21</sup>: Ինչպես արդեն նշել ենք՝ նախկինում կաթողիկ ուսուցչի նկատմամբ թեմակալ առաջնորդի վերաբերմունքն այնքան էլ բարյացկամ չի եղել, և այս խնդրանքն ընդունելու հարցում Լազարյաններն ակնհայտ ջանքեր էին գործադրում, ինչն ուղղակիորեն երևում է նամակի հետևյալ տողերում. «Իսկ յընդունել Ձեր ի նմանէ զայսպիսի իշխանութիւն, ունիք խորհրդակցել ընդ վեհազնեաց բարերարաց իմոց (իմա՝ Լազարյանների - Հ. Օ.) և ըստ որոշելոյ խորհրդոյն կատարել զմնացեալսն»<sup>22</sup>:

Սակայն բոլոր այդ խնդրանքներն առժամանակ անարձագանք էին, ինչի պատճառով էլ միջամտում է Հովակիմ Լազարյանը: 1823 թ. դեկտեմբերի 14-ին, դիմելով Ներսես Աշտարակեցուն, նա անդրադառնում է Միքայել Սալլանթյանին Հայ եկեղեցի ընդունելու հարցին. «Ոչ միայն փափագ եռանդագին առ դարձ ի լուսաճնունդ անախտ մայր իւր, այլև զղջումն յոյժ, վասն որոյ և զղջական խնդիրս նորա գրեալս առ սրբազնակատար Վեհապետն, առ Ձերդ սրբազնութիւն և առ Յովհաննէս սրբազանն»<sup>23</sup>: Ինչպես պարզվում է՝ այդ հարցում ունենալով ռուսահայոց առաջնորդի հավանությունը՝ Հ. Լազարյանը, շարունակելով իր միտքը, գրում է. «Խնդրեմ համաձայն մտաց և գրութեանց սրբազան առաջնորդին Յովհաննէս՝ արժանի համարեալ զսա կրկին ընդունելութեան հաճեցու-

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 3, թ. 1 ա:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 22, թ. 2 ա:

ջիք զսրբագան վեհապետն մուծանել զսա յեկեղեցի և ի ձեռն վիճակաւոր առաջնորդիս՝ առաքել այսր յանուն սորա կոնդակ վեղարի և ծայրագոյն վարդապետութեան»<sup>24</sup>: Ավելին՝ նա հավաստիացնում է Ներսես արքեպիսկոպոսին, որ, ինչպես վերջինս, այնպես էլ վեհափառը որևէ մտավախություն չպետք է ունենան այն առումով, թե դա կարող է հարուցել ռուսական իշխանությունների դժգոհությունը, քանի որ «Մեք խորհեալ ենք յառաջագոյն զայդ ամենայն և ըստ հաւատարիմ արանց, որ ի դրանն արքունի, խորհրդակցեալ ենք»<sup>25</sup>: Բացի այդ՝ Հ. Լազարյանը հետագայի համար էլ է երաշխավորություն ներկայացնում. «եթէ յետ ժամանակի յոյզ և ի խնդիր ելցեն ոմանք զայսմ իրէ, մեք հոգասցուք զայդ ամենայն՝ առանց զձեզ ձանձրացուցանելոյ»<sup>26</sup>: Այդպիսով երևում է, որ հարցը տեղում կարգավորված էր համարվում, և մնում էր միայն ունենալ կաթողիկոսի դրական վերաբերմունքը:

Չնայած իրադարձություններն այդքան էլ արագ չեն զարգանում, բայց և այնպես՝ Լազարյանները շարունակում են հետևողականություն ցուցաբերել: Ըստ այդմ՝ Հովակիմ Լազարյանը կրկին դիմում է ռուսահայոց թեմակալ առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին: Այս նամակը բնութագրական է այնքանով, որ վերջինս հարկ է համարում հատուկ շեշտել Միքայել Մալլանթյանի կենսագրության որոշ դրվագներ՝ կարծես նպատակ ունենալով հիմնավորապես ցույց տալ, թե ժամանակին նրա կողմից կաթոլիկության ընդունումը բացառապես պայմանավորված է եղել լավ կրթություն ստանալու, այլ ոչ թե Մայր եկեղեցուց հեռանալու ակնկալիքով. «Այժմ սա (Միքայել Մալլանթյանը – Հ. Օ.) յայտնեաց մեզ ճշմարտապէս, թէ ծնեալ է հաւատով Հայաստանեայց սուրբ եկեղեցույ, բայց դիպուածով իմն գնացեալ ի Լիբանան ի վանս լատինադաւան կրօնաւորաց, յարեալ է ի նոսա միմիայն վասն ուսումնականութեան անդանօր ծաղկելոյ, որում սիրահարն է ի մանկութենէ, իսկ վասն հայրենաւանդ կրօնին արտաքուստ լքանելոյ»<sup>27</sup>: Ընդամին՝ նա փորձում էր հոգևոր առաջնորդին հավաստիացնել, թե այժմ, երբ Լազարյան ճեմարանում բոլոր պայմանները ստեղծված են ուսուցանելու և ստեղծագործելու համար, այլևս անհրաժեշտություն չկա կապված մնալ կաթոլիկ աշխարհի հետ: Միևնույն ժամանակ՝ մեծանուն հայ բարերարը հավաստիացնում էր թեմակալ առաջնորդին, թե ինչպիսի օգուտներ նա կարող էր բերել հայկա-

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> ՄՄ, Ավ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 23, թ. 1 բ:

կան համայնքին. «գիտեմք զբարի բարի հանգամանս անձին սորա, եթէ ըստ ներքին պարկեշտակրոն առաքինասէր վարուցն և եթէ ըստ արտաքին քաջավարժ հնտութեանցն ի գանազան լեզուս և ի մակացութիւնս, որոյ աղագաւ իսկ կարէ և՛ ազգի, և՛ եկեղեցոյ բազմօք լինել պիտանի»<sup>28</sup>:

Մինչդեռ հարցն այդպես էլ դրական լուծում չէր ստանում: Կարելի է կարծել, որ այն ձգձգվել է նաև այն նկատառումով, որ կաթողիկոսի համար ընդունելի չի եղել հեռակա կարգով դա անելը: Համեմայն դեպս՝ այդ է վկայում 1824 թ. մարտի 27-ին Հովակիմ Լազարյանի՝ Ներսես Աշտարակեցուն գրած նամակը: Այս անգամ արդեն, ելնելով իրավիճակից, քննարկվում էր Միքայել Սալլանթյանի՝ անձամբ Ս. Էջմիածին ներկայանալու հարցը: Այդուհանդերձ, Հովակիմ Լազարյանը փորձում է ևս մեկ անգամ ազդել իրավիճակի վրա՝ մատնացույց անելով այդպիսի ճանապարհորդության խոչընդոտները, մասնավորապես՝ «Թէ որո՞վ անուամբ մարթասցի սա գալ. իբրև հա՛յ, թէ իբրև լատինադաւան, զի չունի բնաւ իսկ պաշտօրտ»<sup>29</sup><sup>30</sup>: Ապա հանգում է հետևյալին. «Եթէ ի մետրապօլտէն խնդրեսցէ, նախ՝ անպատշաճ է, զի ընդդէմ է մերումն նպատակի և երկրորդ՝ անյուսալի է, զի ի վերջին գալստենէ իւրմէ՝ չէ երևեալ բնաւ յեկեղեցիս լատինաց»<sup>31</sup>: Հետևաբար Հովակիմ Լազարյանը գրում է. «Եթէ կարելի է արդէն իսկ ընդունելն զսա, յայնժամ պատուէր լիցի վիճակաւոր սրբազան առաջնորդին Յովհաննու տալ սնա պաշտօրտ յանուն հայոց վարդապետի, որով մարթասցի սա գալ ի Հաղբատ՝ յոտս Ձեր»<sup>32</sup>: Ըստ նրա եզրակացության՝ հակառակ դեպքում այլ տարբերակ չի մնում, քան «զվեղար և զփիլոն ուրոյն թղթով և վայելուչ բարեյորդոր առ ժողովուրդսն կոնդակաւ այսր փութացուցանել»<sup>33</sup>:

Հաջորդ իսկ օրը՝ 1824 թ. մարտի 28-ին, միևնույն մտավախություններով Ներսես Աշտարակեցուն է գրում նաև Միքայել Սալլանթյանը նախ մանրամասնորեն անդրադառնալով իր կենսագրության այն դրվագներին, թե ինչպես էր եկել Ռուսաստան, որպես կաթոլիկների առաջնորդ՝ պաշտոնավարել Դրիմում և Աստրախանում՝ միաժամանակ մասնավորեցնելով այն միտքը, որ ինքը, հատկապես վերջին շրջանում, ավելի շատ կապված է Հայ եկեղեցու հետ, իսկ իր այցերը կաթոլիկ եկեղեցի եղել են բացառապես ի պաշտոնէ՝ «ըստ բնատուր փափաքանացս գրէթէ

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Անձնագիր (паспорт):

<sup>30</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 47, թ. 1 բ:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Նույն տեղում:



յամենայն կիրակէի յաճախէի յեկեղեցին հայոց և ըստ կարի խորշէի ի քաթօլիկաց»<sup>34</sup>: Նա հիշատակում է, որ այդ պատճառով անգամ արժանացել էր տեղի կաթօլիկների հետևյալ հանդիմանությանը. «թէ հայանալովդ զի՞նչ աւելի գտիր, քան որ ի մէնջ, զի տակաւին նովին պատառտուն և ի մէնջ ստացեալ զգեստովդ շրջիս հետիոտս, ուր նախորդն քո մեծապատիւ Սերովբէ վարդապետն զուգածի կառօք շրջէր ի զգեստս լուսափայլս և նորափետուրս»<sup>35</sup>: Այս և նամակում արժածված մյուս իրողությունները հաշվի առնելով՝ Միքայել Սալլանթյանն անգամ վտանգավոր է համարում ճամփորդական փաստաթուղթ ձեռք բերելու համար մետրապոլիտին դիմելը՝ հաշվի առնելով ճամփորդության իրական նպատակը, քանի որ «քաթօլիկք տեղւոյս անքուն ականբ հսկին յամենայն շարժունսս ին»<sup>36</sup>: Ակներև է, որ Ներսես Աշտարակեցուն ուղղված այս նամակը համաձայնեցված է եղել Հովակիմ Լազարյանի հետ, քանի որ Հայ եկեղեցու վարդապետի աստիճանի հայցման հիմնավորումները գրեթե բառացիորեն կրկնվում են նաև այստեղ: Հարկ է նաև նշել, որ ճամփորդության մեկ այլ կարևոր առիթ էլ է ներկայացվում. հայտնի է դառնում, որ «Քերականութիւն իմ, որպէս և միւս գիրքն վասն հաւատոյ, քանզի դեռ անկատար են, յայսմ միջոցի որչափ հնար է, աշխատեմ ի կատարելագործել, որպէս զի եթէ յաջողեցի գալուստ իմ այդր, բերից ընդ իս յոտս սրբազնութեան ձերուն»<sup>37</sup>: Հարկ չկա մեկնաբանելու, թե նման դասագիրքը որքանով կարող էր հետաքրքրել Ներսես Աշտարակեցին, ով Թիֆլիսում արդեն նախաձեռնել էր Ներսիսյան դպրոցի բացումը:

Առկա դժվարությունները, մասնավորապես՝ տեղի կաթօլիկ համայնքի հարուցած խոչընդոտներն, ամեն դեպքում, Լազարյաններին ետ չեն պահում սկսած գործից: 1824 թ. ապրիլի 4-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյանները գրում են Եփրեմ կաթողիկոսին՝ խնդրելով, որ վերջինս ընթացք տա Հայ եկեղեցուն անդամագրվելու գործին, քանի որ, ըստ ներկայացվող ուշագրավ մանրամասների՝ Միքայել Սալլանթյանն այլևս գտնվում էր անելանելի վիճակում. «դառնացաւ վիճակ նորա (Մ. Սալլանթյանի – Հ. Օ.) ի թշնամեաց» և «իբր զի զկնի այնր մեծաւոր պատրին լատինացոց տեղւոյս, ոչ շատացեալ երկիցս, առաքել առ նա հրաւիրակս գալոյ յեկեղեցի իւր ըստ նախնի օրինաց, յերկրորդում աւուր ամսոյս եկն անձամբ ի ժամու երեկոյեան ժամակարգութեան նախ յեկեղեցի մեր, իբր

<sup>34</sup> ՄՄ, Ավ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 5, թ. 2 ր:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> ՄՄ, Ավ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 5, թ. 3 ր:

<sup>37</sup> Նույն տեղում:

ի լրտեսել և չտեսեալ զնա անդ՝ մատեալ ի սենեակ նորա յուսումնարանի մերում և պէսպէս բանիւք հրաւիրանաց ստիպեաց զնա անպատճառ ի հրաշափառ տօնիս գտանիլ յեկեղեցուջ և պաշտել զխորհուրդ եկեղեցւոյ»<sup>38</sup>:

Ինչպես համոզվում ենք՝ կաթոլիկ հոգևորականությունը, տեղյակ լինելով Միքայել Սալլանթյանի նպատակի մասին, հետապնդել է նրան՝ փորձելով հեռու պահել այդ մտքից: Իրավիճակն այն աստիճան լարված է եղել, որ Լազարյաններն անգամ խորհուրդ են տվել նրան, որ «կեղծեալ հիւանդութեամբ աչաց ինքնական բանտարգել առնել զանձն յայտոսիկ ատուրս տօնից, չգնալ յեկեղեցի՝ ոչ ի մերն, և ոչ ի նոցայն»<sup>39</sup>: Ահա թե ինչու Լազարյանները խիստ հրատապ էին համարում նրա՝ Հայ եկեղեցուն անդամագրվելու հարցի շուտափույթ լուծումը՝ այդպիսով նաև հոգևորականին զերծ պահելու հետագա հետապնդումներից:

## 2. Միքայել Սալլանթյանը՝ հայ եկեղեցու վարդապետ

Լազարյանների ջանքերով, ի վերջո, հնարավոր է դառնում կազմակերպել հոգևորականի ձամփորդությունը: Այդ են վկայում 1824 թ. ապրիլի 10-ին Հովակիմ Լազարյանի գրած նամակները Եփրեմ կաթողիկոսին և Ներսես Աշտարակեցուն: Եթե Հայոց հայրապետին ուղղված նամակում նա տեղեկացնում է, որ «զգիտնական Յովակիմ վարդապետն Սալլանթեան, զբազմաշխատ վարժապետ վարժարանիս և զհարազատ սիրելի մեր և եկեղեցույս առաքեմք յոտս Ձեր սրբանեալ ի լրումն փափագանաց իւր և մեր»<sup>40</sup>, ապա ուշագրավ է Ներսես թեմակալին ուղղված՝ սպասումներով լի նամակը: Ըստ այդմ, քանի որ ձամփորդության հարցն արդեն լուծված էր՝ այս անգամ Լազարյանները հույս էին հայտնում, որ Ներսես թեմակալը պատշաճ ընդունելության կարժանացնի իրենց հովանավորյալին<sup>41</sup>: Հարցը ներկայացվում էր Լազարյան ձեմարանում կրթության կազմակերպման կարևորության տեսանկյունից, ուստի Հովակիմ Լազարյանը խնդրում է. «Կատարեցէք զգանկութիւն սրտի դորա ի լրումն փափագաց իւրոց և ի պիտանութիւն առ ուսուցչական պաշտօն մերումն դպրոցի»<sup>42</sup>:

<sup>38</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 57, թ. 1ա:

<sup>39</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 57, թ. 1բ:

<sup>40</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 50, թ. 1ա-1բ:

<sup>41</sup> Տե՛ս ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 29, թ. 1ա:

<sup>42</sup> Նույն տեղում:

Միքայել Սալլանթյանի ճամփորդության վերաբերյալ ևս ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Մատենադարանի վավերագրերում: Ըստ այդմ՝ նա Մոսկվայից դուրս է եկել 1824 թ. ապրիլի 9-ին և Նոր Նախիջևան հասել միայն մայիսի 3-ին, որտեղից էլ նամակ է գրել Հովակիմ Լազարյանին: Ինչպես երևում է՝ ճամփորդության ժամանակ դժվարություններ են եղել, քանի որ, ինչպես ինքն է գրում՝ «կիսակենդան հասի աստ ի Նախիջևան»<sup>43</sup>: Հարկ է նշել, որ դժվարին իրավիճակում հայտնված հոգևորականին, Լազարյանների հեղինակության շնորհիվ, ցույց է տրվել պատշաճ ընդունելություն, ինչի վկայությունն է նամակի հետևյալ պատկերավոր նախադասությունը. «Ի միջի այսչափ խաչակրութեանց իմոց, այն որ միմիայն քաղցրացուցանէր զծովացեալ դառնութիւնս, էր մտածելն զանասահման մեծութիւն և զլայնութիւնն, զբարձրութիւնն և զխորութիւնն անօրինակ բարերարութեանց և երախտեաց ձերոց առ իս»<sup>44</sup>: Այդպիսով, վատառողջության պատճառով ճամփորդությունը տևականորեն ընդհատվել է և, ինչպես Միքայել Սալլանթյանն է գրում. «Յետ կազդուրելոյ առողջութեանս ունիմ ելանել աստի և դէպ ուղիղ դիմել ի Թիֆլիս»<sup>45</sup>:

Ապաքինվելուց հետո շարունակելով ճանապարհը՝ հայ հոգևորականը միայն մայիսի 30-ին է կարողանում հասնել Մոզդոկ<sup>46</sup>: Այստեղ ևս Լազարյանների անունն իր դերն է ունենում. «Օթևանս կալայ ի տան ազնիւ Պօղոս Ֆետդորով Արղութեանց Դոկտորուկովին, զորմէ յանչափ շնորհակալ եմ, զի ի սէր և ի պատիւ Ձեր, առաւել քան զարժանն պատիւ ցուցանէ ինձ»<sup>47</sup>: Ճամփորդության դժվարությունները, սակայն, այդքանով չեն ավարտվել. պարզվում է՝ գետերի վարարման պատճառով Թիֆլիս տանող ճանապարհը փակ է եղել, ինչի հետևանքով նա որոշել էր գնալ Վլադիկավկազ՝ «անդր մնալոց մինչև ի բանալ ճանապարհին»<sup>48</sup>:

Այդուհանդերձ, Միքայել Սալլանթյանի ճամփորդության դրական արդյունքների վերաբերյալ եզրակացություններ կարելի է անել 1824 թ. հուլիսի 15-ին Ներսես Աշտարակեցուն Հաղպատից գրած նրա նամա-

<sup>43</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 11, թղթ. 105, վավ. 67, թ. 1 ա:

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> Միքայել Սալլանթյանն այս նամակը Հովակիմ Լազարյանին է գրել Մոզդոկից՝ 1824 թ. հունիսի 3-ին, տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 11, թղթ. 105, վավ. 69, թ. 1 ա:

<sup>47</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 11, թղթ. 105, վավ. 69, թ. 1 բ:

կից<sup>49</sup>: Նախ փաստենք, որ նրա բարերարների ջանքերն, ի վերջո, ապահովել են բաղձալի արդյունքը. Միքայել Սալլանթյանը լավ ընդունելության է արժանացել վեհափառի կողմից. «Ընկալեալ եղէ յամենեցուն արտաքոյ արժանաւորութեան ինում ամենայն սիրով և գրկախառն գգուանօք»<sup>50</sup>: Դրանից հետո՝ հուլիսի 5-ին, Եփրեմ կաթողիկոսը նրան ընդունում է միաբանության շարքերը. «Շնորհեալ ինձ զվեղար և զփիլոն, փոխարկել զանուն իմ ի Միքայել: Ի 6 տուեալ զգաւազան մասնաւոր վարդապետութեան, ի 13 ամսոյս ի տօսի վարդավառին հաճեցաւ իւրով աստուածամերձ աջով տալ զգաւազան ծայրագոյն վարդապետութեան»<sup>51</sup>, գրում է նորընծա վարդապետը: Մինչդեռ, ինչպես երևում է՝ վեհափառի այդ բարեհաճությունն այն ամենը չէր, ինչն սպասում էին նրանից: Հայտնի է դառնում, որ վարդապետի համար ակնկալվում էր նաև նվիրակի պաշտոն: Այդ հարցում ևս կարևոր էր Ներսես Աշտարակեցու բարեխոսությունն, ինչի մասին էլ նամակում ուղղակիորեն գրված է. «Վասն պաշտօնի նուիրականութեան ինոյ ի Սօսկով և ի Բետրպուրկ<sup>52</sup>... աղաչեմ ամենայն խոնարհութեամբ, զի հաճեսցիք օր մի յառաջ գրել, որպէս զի լիցի ժամանակ ընդ իս տանելոյ զկոնդակ և զսրբալոյս միւռոնն»<sup>53</sup>:

Այդպիսով, Միքայել վրդ. Սալլանթյան, որպես Հայ առաքելական եկեղեցու միաբան, արդեն ոչ միայն հնարավորություն է ստանում շարունակել իր ուսուցչական գործունեությունը Լազարյան ճեմարանում, այլ նաև, ինչպես պարզվում է նամակի վերջին տողերից, հոգևոր ծառայություններ մատուցել համայնքին:

### 3. Միքայել վրդ. Սալլանթյանի հոգևոր և գիտամանկավարժական գործունեությունից

Ակներև է, որ Միքայել Սալլանթյանի՝ Մայր Աթոռի նվիրակ հաստատվելու հարցում մեծապես շահագրգռված էին հենց Լազարյանները, թեև կարծում ենք, որ այդ նպատակը Հաղպատում գտնվելու ժամանակ է օրակարգ մտել, ինչի հավաստում կարելի է համարել 1824 թ. օգոստոսի

<sup>49</sup> Խոյս տալով պարսկական իշխանությունների հալածանքներից՝ 1822 թ. հայկական այդ նշանավոր վանքում էր ապաստանել Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսը, տե՛ս **Тунян В. Г.**, Католикос Всех Армян Епрем I Дзорогехци (1809-1830), Св. Эчмиадзин, Изд. Первопрестольного Святого Эчмиадзина, 2018, էջ 116-117:

<sup>50</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 48, վավ. 113, թ. 1ա:

<sup>51</sup> Նույն տեղում:

<sup>52</sup> Բետրպուրկ (Սանկտ Պետերբուրգ):

<sup>53</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 48, վավ. 113, թ. 1 բ:

29-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված Հովակիմ Լազարյանի նամակը: Վերջինս կրկին դիմում էր Վիրահայոց թեմակալ առաջնորդին առ այն, որ «խնդրեմ ի սրբազնալոյս քահանայապետէն և ի Ձե՛նջ, զի յարգեսցիք զդա սրբալոյս միւռնի կոնդակաւ և նուիրակ անուամբ փոխանակ Թովմայ վարդապետին, որովհետև ի վաղնջուց հետէ չիք սովորութիւն նուիրակաց մտանել յայս երկու մայրաքաղաքս (Մոսկվա և Ս. Պետերբուրգ – Հ. Օ.)»<sup>54</sup>: Բայց միայն նվիրակի պաշտոնի հարցը չէր, որ զբաղեցնում էր Լազարյաններին. նրանք ավելի հեռուն գնացող ծրագրեր ունեին ձեւարանի ուսուցչի հարցում և ցանկանում էին վարդապետին տեսնել Մոսկվայի և Ս. Պետերբուրգի փոխանորդի պաշտոնում<sup>55</sup>: Դա կամայական ցանկություն չէր. Հովակիմ Լազարյանը դրա համար նշում էր երկու հիմնավոր պատճառ, նախ՝ «շահեալ ունիցիմք զայրդ պիտանի ըստ չափու արժանաւորութեան», և որ «զի այնսիկ լիցի ըմբերանել գներքին և զարտաքին թշնամիս դորա, որք անհնարին մոլեգնութեամբ ծանրացասումն լիցին ի տեսանել զդա աստանօր վիճակափոխ և կերպարանափոխ»<sup>56</sup>: Այդ նպատակով Հովակիմ Լազարյանը նույն օրը գրել է նաև Հովհաննես արքեպիսկոպոսին, որ, որպէս բարի և արժանավոր մարդու՝ «յանձնեսցիք նմա զյաջորդութիւն Մօսկովու քաղաքիս, որպէս զի ներքին և արտաքին թշնամիք նորա ակնածութիւն ունիցին և մի իւր կարասցին անգոսնել և անպատուեալ զնա»<sup>57</sup>:

Մինչդեռ Հովհաննես արքեպիսկոպոսը, չցանկանալով իր թեմում նորընծա վարդապետին տեսնել հոգևոր որևէ պաշտոնում, իր հնարավորությունների սահմաններում սկսում է խոչընդոտել: Դա ակնհայտ երևում է 1825 թ. հունվարի 16-ին հայոց կաթողիկոսին գրված Միքայել Սալլանթյանի նամակից, որն սկսվում է հետևյալ հուսահատ նախադասությամբ. «Անօթապարտ եմ առաջի սրբազնագոյն տերութեան ձերոյ, զի թէպէտ և յոչ կամաց, այլ ընդ բերելոյ անտնօրինելի հարկին, անկարացայ մինչև ցայսօր ցուցանել զպաշտօն ծառայութեանս»<sup>58</sup>: Նամակի հաջորդ տողերից էլ պարզվում է այդ «թերանալու» պատճառը: Առաջ անցնելով նշենք, որ, թեև նա Ներսես Աշտարակեցու միջոցով արդեն ստացել էր իր նշանակման կոնդակը. «Զշնորհաբաշխ նամակ և զկոնդակ նուիրականութեան երկուց մայրաքաղաքացս ձեռամբ գերագահ սրբազան Ներսէս ար-

<sup>54</sup> ՄՄ, Ավ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 32, թ. 1 ա:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> ՄՄ, Ավ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 48, թ. 1 ա:

<sup>58</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 46, թ. 1 ա:

քեպիսկոպոսին ընկալայ ձերում ժամու», սակայն «մինչև ցայսօր ոչ ընկալայ ի սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոսէ և առաջնորդէ մերմէ գարբալոյս միռոնն»<sup>59</sup>:

Այդքանով հանդերձ, ռուսահայոց թեմակալ առաջնորդի հարուցած խոչընդոտները չեն սահմանափակվում: Լազարյանների ջանքերն էլ այս անգամ, մեծ հաշվով, արդյունք չեն տալիս, ինչի համար Միքայել Սալանթյանը 1825 թ. փետրվարի 6-ին կրկին դիմում է կաթողիկոսին: Ի հայտ է գալիս այն իրողությունը, որ թեմակալ առաջնորդը, նախորդ տարվա օգոստոսից սկսած, տևական ժամանակ հարկ չէր համարել անգամ պատասխանել իրեն ուղղված նամակներին և միայն «այժմ ի 21 յունվարի գրեալ է առ որդիս վեհագնեայց պատասխանի ծաղրական, ես, աւէ, յօժարութեամբ սրտի ընկալայ գմիջնորդութիւն ձեր, վասն որոյ յաջորդութիւն Միքայել վարդապետին ի քաղաքիդ, բայց պարտիք, աւէ, սպասել, իբր զի վասն այսր գրեցի ես առ հոգևոր տերն մեր և առ բարձր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսին և տակաւին չեմ ընկալեալ ի նոցանէ պատասխանի, յորժամ ընկալայց, աւէ, ի նոցանէ հաւանութիւն, անպատճառ կատարեցից զխնդիր ձեր»<sup>60</sup>: Ակնհայտորեն այսպիսի պատասխանը մեծապես զայրացրել է Լազարյաններին, ովքեր էլ, ըստ ամենայնի, խորհուրդ են տվել վարդապետին՝ անմիջականորեն դիմել կաթողիկոսին: Խորապես դժգոհելով ռուսահայոց թեմակալ առաջնորդից՝ Էջմիածնի նվիրակը հիմնավորապես միտում էր տեսնում վերջինիս գործողություններում, այդ թվում՝ մյուռոն տրամադրելու հարցում, ինչի պատճառով ինքը չէր կարողացել պատարագ մատուցել, ուստի հուզումնալից գրում է վեհափառին, թե «...առանց դնելոյ հրապարակաւ գարբալոյս միռոնն ի սեղանի, չէ հնար ընթեռնուլ գկոնդակն և օրինել զժողովուրդն, քարոզել և սկսանել հաւաքել զօգնութիւն»<sup>61</sup>: Մինչդեռ պատարագ մատուցելու անհնարինությունը պայմանավորված է եղել տեղի Միմեոն քահանայի մահվամբ և Մինաս քահանայի հիվանդությամբ, և Լազարյանները ստիպված են եղել Պետերբուրգից հրավիրել Գևորգ քահանային: Հայցելով հայրապետի ներողամտությունը «վասն շտապ գրութեանս»՝ նա իր նամակը եզրափակում է հետևյալ խորհրդածությամբ. «Ես միայն եմ մնացեալ, որ պարտիմ հասանել ծառայութեան եկեղեցւոյն, ժողովրդին և ուսումնարանին»<sup>62</sup>:

<sup>60</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 47, թ. 1 ա:

<sup>61</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 47, թ. 1 բ:

<sup>62</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 47, թ. 2բ:

Սպասելի էր, իհարկե, որ նման վիճակը Լազարյանները չէին կարող հանդուրժել: Եվ, իրապես, արդեն 1825 թ. փետրվարի 13-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյանները գրում են Ներսես Աշտարակեցուն՝ տեղեկացնելով, որ Մոսկվայի հայ համայնքը մնացել է առանց հոգևորականի. «Պարտաւոր համարիմք ծանուցանել բարձր սրբազնութեանդ զաղէտալի բօթ մահուան տէր Սիմէօն խոհեմազարդ քահանայի տեղւոյս»<sup>63</sup>, իսկ իրենց բոլոր դիմումները Հովհաննես եպիսկոպոսին անպատասխան են մնացել, ինչի համար էլ դժգոհությամբ գրում են, թե «երկիցս և երիցս գրեալ էաք մաղթանօք, զի զսիրեցեալն ի մէնջ և ի Ձենջ զարժանապատիւ Միքայել վարդապետ հարազատ հաւատարիմն մեր կարգեսցէ յաջորդ ի դիմաց իւրոց ի քաղաքիս, բայց նա յետ ընդ երկար լռութեան ի 23 յունվարի գրեալ է առ մեզ, թէ վասն այսր իրի գրեալ եմ առ սրբազնակատար վեհապետն և առ բարձր սրբազան Ներսէս արհիմ, բայց մինչև ցայժմ չեմ ընկալեալ ի նոցանէ պատասխանի, յընդունեալ իմ ի նոցանէ զարժանաւոր պատասխանի՝ կատարեցից զխնդիր ձեր և այլն»: Պարզ է, որ տեղի քահանայի նշանակումը լիովին մտնում էր թեմակալ առաջնորդի լիազորությունների մեջ, և վեհափառին դիմելու նրա այդ պատասխանը միմիայն ձգձգելու միտում է ունեցել: Ինչևէ, Լազարյանները խնդրում էին Ներսես Աշտարակեցուն, որպեսզի վերջինս հոգ տանի և հաջողի այդ նշանակումը<sup>64</sup>: Լազարյանները, իրենց բացահայտ դժգոհությունը հայտնելով թեմակալ առաջնորդից, ըստ ամենայնի՝ կասկածի էին ենթարկում նաև նրա՝ այդ հարցով վեհափառին և Ներսես Աշտարակեցուն դիմելու հանգամանքը. «Յոյժ թուեալի է մեզ, զի տեղւոյս առաջնորդն, ոչինչ օրինակ բարեաց առնելով ի սրբազան հօրէդ, կայս մնաց առանց իրիք ներգործականութեան յօգուտ ազգիս»<sup>65</sup>:

Ինչպես երևում է՝ զուր չէին Լազարյանների սպասելիքները Վիրահայոց թեմակալ առաջնորդից, ինչն արտացոլված է Միքայել Սալլանթյանի՝ ապրիլի 25-ին Ներսես Աշտարակեցուն գրած նամակում: Պարզ է դառնում, որ նրա նշանակման հարցն արդեն լուծված էր, և նա ստացել էր մյուռոնը. «Ձշնորհաբաշխ գրութիւն ձեր ի 15 մարտի ընդ անգին գանձու աստուծալոյս միւռոնի սրբոյ ընկալայ անթերի»: Իսկ Հովհաննես արքեպիսկոպոսը, Ներսես Աշտարակեցու ջանքերով, ի վերջո, տեղի էր տվել և արդեն պաշտոնապես հաստատում է Միքայել Սալլանթյանի նշանակումը. «ի 23 ամսոյս ընկալայ ի բարձր սրբազնութեան Յովհաննէս առաջ-

<sup>63</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 36, թ. 1ա:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>65</sup> Նույն տեղում:

նորդէ մերմէ գիշխանութիւն և զվկայական օրինաւոր հաստատութեամբ վասն լինելոյ ինձ յաջորդ եկեղեցեաց քաղաքիս»<sup>66</sup>:

Այդպիսով, կարելի է նշել, որ Միքայել Սալլանթյանը, գիտամանկավարժական իր ակտիվ գործունեությանը համահունչ, հնարավորություն է ստանում նաև հոգևոր ծառայություններ մատուցել համայնքին: Հոգևոր նշանակումից բացի, նամակում արծածված է մեկ այլ կարևոր հարց ևս՝ հայոց լեզվի քերականության նոր դասագրքի ստեղծման՝ այդքան ձգձգվող աշխատանքների ընթացքը. «քերականութիւն իմ, զոր խնդրէք տպագրեալ այդր, մօտ էր ի կատարելագործիլ, այլ տկարութիւնս այս աղաց (Լազարյանների – Հ. Օ.) ընդ մէջ անկեալ կապեաց զձեռս իմ»<sup>67</sup>:

Հարկ է նկատել, որ տվյալ աշխատանքի բացառիկ կարևորությունը մեծապես գիտակցվել է հայագիտության երախտավորներ Լազարյանների կողմից՝ ոչ միայն ձեմարանի, այլև հայկական մյուս դպրոցների նկատառումով: Եվ ահա 1826 թ. դեկտեմբերի 28-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյանները հպարտությամբ տեղեկացնում են Ներսես Աշտարակեցուն, որ «օրինակն ամենայն քերականութեանց քերականութիւն պարզ և դիրքիմանալի ոճով, որում համատիպն երբէք ո՛չ եղև յօրինեալ ո՛չ ի հին և ո՛չ ի նոր հեղինակաց, և ո՛չ այլևս լիցի առ յապայն, գտանի ի տպագրութեան»<sup>68</sup>: Իսկ այդ դասագրքի համահայկական նշանակության մասին բնորոշիչ են հետևյալ տողերը. «Բառնալ յազգէս և յանձանց զանուն կարօտութեան այլոց ազգաց և մերովս սեպիական ձրագաւ մերոց լոյս մատուցանել, այլ օտարին ինքեան լիցի այսուհետև ի վայելումն չիք մեր յայն հարկաւորութիւն»<sup>69</sup>: Ինչպես հայտնի է՝ 1827 թ. դասագիրքն արդեն տպագրված էր՝ «Բերականութիւն գրաբառ լեզուի Հայոց նորակարգ ոճով» վերնագրով և լայնորեն գործածվում էր հայկական դպրոցներում<sup>70</sup>: Բայց մանկավարժի ձեռքբերումներն այդքանով չէին սահմանափակվում, նա արդեն մտածում էր երկրորդ հատորի մասին:

1827 թ. հուլիսի 7-ին հայոց կաթողիկոսին գրած նամակում վարդապետը հավաստիացնում է, որ իր դասագրքում «ունիք տեսանել ի նմին, զի զբազմապատիկ սխալանս վենետկեան վարդապետաց յուսմունս քերականութեան, խայտառակեալ եմ, ընդդէմ որոց չունին ամենևին ձիկ

<sup>66</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 49, թ. 1 ք:

<sup>67</sup> Նույն տեղում:

<sup>68</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 44, թ. 1 ա:

<sup>69</sup> Նույն տեղում:

<sup>70</sup> Տե՛ս Թաղէոսեան 3., Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ձեմարանի արեւելքեան լեզուաց, էջ 314:



հանել»<sup>71</sup>: Եվ ահա հմուտ ուսուցիչն այժմ խնդրում էր իրեն ուղարկել մի շարք կարևոր ձեռագրեր երկրորդ հատորի աշխատանքների համար, քանի որ «առ իւրաքանչիւր կանոն հարկ է յաւելուլ զօրինակս ի բանից նախնեաց մերոց, որք գրեցին վսեմ և խրթին շարադրութեամբ, որպիսի են գրուածք Յովհաննու Օձնեցոյ, ճառք Խորենացոյն, Մամբրէի Վերծանողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, պատմութիւն Յովհաննու կաթողիկոսին, գրուածք և թուղթք և բառագիրք Գրիգորի Մագիստրոսին և այլն»<sup>72</sup>: Իսկ թե որքանով էր Միքայել Սալլանթյանը կարևորում այդ ձեռագրերի արժեքը՝ բնորոշում է նամակում արծածված նրա հետևյալ միտքը. «և թէ լնուք զայս բաղձանս իմ, անչափ մեծ համարիմ զայն, քան թէ միլիոնս և թագաւորութիւնս պարզևէիք ինձ»<sup>73</sup>: Նույնաբովանդակ մի նամակ էլ 1827 թ. հուլիսի 28-ին նա ուղարկել է Ներսես Աշտարակեցուն<sup>74</sup>:

Այնուհանդերձ, Լազարյան ճեմարանի ուսուցչին մտահոգում էր ոչ միայն իր դասագիրքը. նա մեծապես խրախուսում էր նաև ճեմարանի սաների ստեղծագործական ակտիվությունը: Մեր ձեռքի տակ են մի շարք վավերագրեր, որոնք բնութագրում են Միքայել Սալլանթյանի ջանքերը՝ ուղղված ճեմարանի շնորհաշատ սաների երկասիրությունների տպագրմանը: Այդ հարցով նա դիմել է Խաչատուր Լազարյանին՝ ապավինելով բարերարի հովանավորությանը<sup>75</sup>: Ուշագրավ է նաև այդ հրատարակության վերաբերյալ բազմափորձ մասնակավարժի հորդորը տպագրությունը բացառապես բարձր որակով կատարելու առնչությամբ. «Վասն այսպիսի գրոց պիտոյ գնել զլաւագոյն թուղթ, մանաւանդ վասն տղայամիտ ազգիս մերոյ, որք զթուղթն և զկազմն քննեն և ո՛չ զներքին լաւութիւն գրոցն»<sup>76</sup>:

Միքայել Սալլանթյանը գտել էր նաև որակյալ տպագրիչի, ով, ինչպես պարզվում է՝ «վասն միոյ լիստի կամի զերեսուն ռուպլի»<sup>77</sup>: Ծախսերը, սակայն, այդքանով չէին սահմանափակվում. դրանց գումարվում էին նաև տպագրական այլ ծախսեր, և նա խնդրում էր Խաչատուր Լազարյանին՝ այդ գումարը հատկացնելու կարգադրությունը<sup>78</sup>: Մեծանուն բարերարը, որն ընդամենը շաբաթներ առաջ անձամբ էր դիմել ուսուցչին՝ «խնդ-

<sup>71</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 181, թ. 1ա:

<sup>72</sup> Նույն տեղում:

<sup>73</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 181, թ. 1բ:

<sup>74</sup> Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 179:

<sup>75</sup> Տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 233, թ. 1ա:

<sup>76</sup> Նույն տեղում:

<sup>77</sup> Նույն տեղում:

<sup>78</sup> Նույն տեղում, թ. 1բ:

րէմ ի ձենջ բարեկամաբար յաուրս արձակուրդի, որ մանկանց պարապեցուցանեալ զնոսա և պարապեալ ընդ նոսա, որպէս յայտնի է Ձեզ, զի առաւել առաջադէմ նկրտեսցին ի լեզուին իւրեանց հայրենի»<sup>79</sup>, ոչ միայն պատրաստականություն հայտնեց լիովին ստանձնել տպագրության ծախսերը, այլև շտապեցրեց վարդապետին՝ շուտափույթ կատարել այդ գործը. «Մի ի ծանիր ծախեսցեն զժամանակն»<sup>80</sup>:

Վերը ներկայացված դրվագներից, կարծում ենք, ակներև են վարդապետ-ուսուցչի ազգանվեր գործունեության կարևոր ձեռքբերումները:

#### 4. Ցարական իշխանությունների հետապնդումները և եպիսկոպոսության աստիճանը

Միքայել վրդ. Սալլանթյանի կրթամանկավարժական գործունեության այդ եռուն շրջանում, սակայն, նոր դժվարություններ էլ են ի հայտ գալիս: Ըստ ամենայնի, նրա հակառակորդներին, ի վերջո, հաջողվում է իր դեմ ուղղորդել ցարական իշխանություններին: Մասնավորապես հայտնի է դառնում, որ 1827 թ. սեպտեմբերի 10-ին Մոզիլյովի հռոմեակաթոլիկական կոնսիստորիայի բողոքի հիման վրա գրություն է ուղարկվել դատական կատարածուին, որպեսզի հայ վարդապետից բացառություններ պահանջվեն կաթոլիկական դավանանքը փոխելու հանգամանքների վերաբերյալ<sup>81</sup>:

Մեզ հասանելի է սեպտեմբերի 20-ին Մոզիլյովի կոնսիստորիային ուղղված Միքայել Սալլանթյանի՝ ռուսերեն լեզվով ծավալուն տեղեկանքը, որում նա ներկայացնում է, թե երբ է եկել Ռուսաստան ու՝ որտեղից, երբ է փոխել դավանանքը և այլն: Ըստ այդմ՝ Միքայել Սալլանթյանը գրում է, որ «Ես Օսմանյան կայսրությունից Ռուսաստան եմ ժամանել 1825 թ.՝ Վրաստանով: Ծնվել եմ Կոստանդնուպոլսում, և, քանի որ իմ ծնողները եղել են հայեր՝ կնքվել եմ հայկական ծեսով, իսկ հետագայում՝ երիտասարդ ժամանակ, ջենովացի հոգևորականի կողմից ընդունել եմ լատինական դավանանքը, բայց իմ հոգու հանգստության համար, - շարունակում է նա, - այժմ վերադարձել եմ նախկին հավատքին»<sup>82</sup>: Ապա նշում է իր գործունեության որոշ հանգամանքներ՝ կապված հայկական եկեղեցում հոգևոր ծառայություն մատուցելու, Լազարյան ձեմարանում դասա-

<sup>79</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 249, թ. 1ա:

<sup>80</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 245, թ. 1ա:

<sup>81</sup> Տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 255, թ. 1ա:

<sup>82</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 275, թ. 1 բ:

վանդելու հետև և այլն: Գրության վերջում նա հույս է հայտնում, որ ներկայացված տեղեկությունները կփոխանցվեն համապատասխան ատյաններ, որպեսզի դիտարկվի, թե ինչու են իրենից պահանջում՝ չբացակայել քաղաքից<sup>83</sup>: Ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակում Լազարյանները միայնակ չէին թողնի ձեռնարանի ուսուցչին և, իրոք, ջանքեր են գործադրում իրավական դաշտում ևս օժանդակելու նրան: Դա է վկայում 1827 թ. սեպտեմբերի 24-ի Միքայել Սալլանթյանի նամակը Խաչատուր Լազարյանին, որում նա իր երախտագիտությունն է հայտնում՝ գրելով. «Գոհ եմ մեծապես զագնի Աղալու Աթանասիչէն, որ խնդրեաց զմի յօրինագէտ բարեկամաց իւրոյ շարադրել զայս պատասխանի»<sup>84</sup>:

Սակայն, տրված բացատրությունները, ըստ ամենայնի, բավարար չեն եղել: Ցարական իշխանությունները շարունակել են քննել հայ ուսուցչի գործը: Այդ նասին էլ նա շտապում է տեղեկացնել Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին՝ 1827 թ. սեպտեմբերի 27-ին տագնապալից հայտնելով նույն ամսվա 25-ին իրեն ուղարկված երկու ծանուցագրերի մասին՝ դրանց պատճենները փոխանցելով նրանց. «Մին է ուքազ Մօկիլովա լատինաց քօնսիստօրին և միւսն է տեղոյս փօլիցմայէստօր Շուկինի հրաման առ փրիստավն մեր, որով պահանջէ յինէն պատասխանի զանազան հարցմանց, նաև ձեռագիր փօսփիսքա վասն չեղանելոյ ինձ ի Մոսկովայ»<sup>85</sup>: Ինչպես նկատում ենք՝ դրությունը լուրջ էր: Ըստ ամենայնի՝ գործ էր հարուցվել և քննություն էր գնում: Այդ պայմաններում Միքայել Սալլանթյանը կրկին ակնկալում էր իր բարերարների աջակցությունը. «ոչինչ կարիմք գործել առանց վեհազնէիցդ»<sup>86</sup>: Հետապնդումների ենթարկվելով՝ Միքայել Սալլանթյանն անգամ խնդրում էր, որ դիմեն համապատասխան մինիստրություն. «Միայն թէ վեհազնեաց տիարքդ իմ, – գրում է նա, – այդդ ի Բետրպուրկ հոգս արարէք, մանաւանդ առ մինիստրն մեր, զի մի՛ պատիժ կամ արքտրանք կամ այլ ինչ անպատուութիւն վերաբերեսցի առ իս»<sup>87</sup>: Հիշյալ իրադարձությունների հետագա ընթացքի վերաբերյալ, ցավոք, մեզ չհաջողվեց այլ վավերագրեր գտնել, սակայն հաջորդիվ զարգացումները վկայում են, որ այն, ըստ ամենայնի, բարեհաջող ավարտ է ունեցել, քանի որ Միքայել Սալլանթյանը շարունակել է ուսուցանել ձեռնա-

<sup>83</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 2 ա:

<sup>84</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 274, թ. 1 ա:

<sup>85</sup> ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 253, թ. 1 ա:

<sup>86</sup> Նույն տեղում:

<sup>87</sup> Նույն տեղում:

րանում, իսկ որոշ ժամանակ անց՝ Լազարյաններն արդեն նրա համար եպիսկոպոսական աստիճան էին ակնկալում:

Այդ հարցի առնչությամբ էլ ուշագրավ է Հովհաննես և Խաչատուր Լազարյանների՝ 1832 թ. փետրվարի 25-ի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղված նամակը: Նշենք, որ, թեև այդ ժամանակ Եփրեմ կաթողիկոսն արդեն հրաժարվել էր գահից, այդուհանդերձ, Լազարյանները կարծում էին, որ հենց նա կկարողանա ընթացք տալ այդպիսի կարևոր հարցին: Նամակում նախ նկատում են, թե իրենց հայրը՝ Հովակիմ Լազարյանը, ինչպիսի հեռատեսությամբ էր ժամանակին ձիշտ որոշում կայացրել՝ Լազարյան ձեռնարան ընդունելով Միքայել Սալլանթյանին: Եվ ինչպես տարիներն էին ցույց տվել՝ նա բացարձակ չէր սխալվել: Եվ ահա այժմ ազգային գործչի որդիներն են դիմում հայոց վեհափառին՝ վերջինիս ներկայացնելով այդ տարիների ընթացքում վարդապետի կատարած ազգօգուտ գործերը. «Զմատեանս տպեաց, զվարժապետս հասոյց, զաշակերտս ուսոյց, զգիտութիւնս պայծառացոյց, զհաւատս և զուղղափառութիւն մեր լուսաւորեաց, զբերանս հերձելոց պապանձեցոյց, զբանն Աստծոյ քարոզեաց և անարատ քաղաքավարութեամբն սիրելի և ցանկալի եղև ոչ միայն մեզ և ամենայն ընտանեաց մերոց, այլև բովանդակ ժողովրդեան քաղաքիս և առաջնորդաց կողմունցս»<sup>88</sup>: Նկատի ունենալով նրա ազգանվեր ծառայությունները՝ Լազարյանները խնդրում էին կաթողիկոսից, որպեսզի նա «օծէ զդա յաստիճան եպիսկոպոսութեան, որում Ձեր և մեր և բոլոր ազգիս միաձայնութեամբ արժանի է ամենայն մասամբք»<sup>89</sup>: Իսկ ժամանակին նրա կաթողիկ լինելու հանգամանքը Լազարյանները ներկայացնում էին որպես ժամանակավոր և հարկադրական մի առաքելություն, որը հետո մեծ օգուտներ բերեց ազգին. «Գնաց և կողոպտեաց դա զոսկի և զարծաթ գիտութեան նոցա ու զորս բերեալ զարդարեաց զեկեղեցի մեր»<sup>90</sup>: Նրանք լիահույս էին, որ Միքայել Սալլանթյանը բարձրագույն հոգևոր այդ նոր կոչումով «առաւել ևս աշխատ լիցի դա յանխոնջ մշակութեան անդաստանի ազգիս ըստ հաւատոյ և գիտութեանց»<sup>91</sup>:

Բայց միայն այդ չէր, որ իրենց նամակում արծարծում էին Լազարյանները. նրանք ակնարկում էին, որ կցանկանային Միքայել Սալլանթյանին տեսնել մի նոր, ավելի բարձր հոգևոր պաշտոնում. «Իբրև հաճոյ լիցի՝ աստ առ մեզ յուղարկեսցիք, ուր իբր յաջորդ վիճակաւոր եպիսկոպոսի

<sup>88</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 284, թ. 1ա:

<sup>89</sup> Նույն տեղում:

<sup>90</sup> Նույն տեղում:

<sup>91</sup> Նույն տեղում:

կողմանցս նստեալ ի Բետրպուրկ կամ ի Մօսկով վերստին պարապեցի յօրինել և տպագրել զայլ ևս կարևոր մատեանս առ լուսաւորութեան ազգի և սուրբ եկեղեցոյ մերոյ»<sup>92</sup>: Նշենք, սակայն, որ այդ ժամանակ արդեն երկու տարի էր, ինչ ռուսահայոց թեմակալ առաջնորդն էր Սերովբե Եպիսկոպոսը, որն իր պաշտոնն ստանձնել էր գէն. Ի. Պասկևիչի հովանավորությամբ<sup>93</sup>: Ըստ այդմ էլ հարց է ծագում՝ ինչպիսի՞ ընթացք կունենար Լազարյանների այդ խնդրանքը երկու հոգևորականների նախկին փոխհարաբերությունների համապատկերի վրա: Եվ, իրապես, այդ հարցը ձգձգվում էր, իսկ նրանք ստիպված էին համբերատար սպասել, ինչի մասին են վկայում վկայում նորանոր դիմումները: Այսպես, ամիսներ անց՝ 1832 թ. հունիսի 25-ին, նույնաբովանդակ նամակով նրանք կրկին դիմում են Եփրեմ կաթողիկոսին<sup>94</sup> և այս անգամ մեկ այլ նամակ էլ ուղարկում արդեն օծված և գահակալող Հովհաննես Ը Կարբեցուն (1831-1842):

Կաթողիկոսին գրած նամակում հանգամանալից անդրադարձ կա Միքայել Մալլանթյանի՝ տարիների ընթացքում կատարած գործերին. «Անն տասն անարատ վարուք ծառայեաց ուսումնարանիս և ութ ամս՝ սրբոյ եկեղեցոյ և հոգևոր դատարանի քաղաքիս, ուսոյց ավելի քան 300 աշակերտաց զամենայն բարձրագոյն գիտութիւնս, պատրաստեաց գյուղով վարժապետս, որոնց ոմանք աստ և ոմանք յայլ և այլ քաղաքս այժմ ուսուցիչ են մանկանց ազգիս ... յօրինեալ ըտպագրեաց զգանազան գերօգտակար մատեանս գիտնականս և բարոյականս»<sup>95</sup>: Հատուկ ընդգծվում է ոչ երկրորդական ևս մեկ իրողություն. իրենք երաշխավորում են, որ կաթողիկոսը կարող է հանգիստ լինել, քանզի ընդունելի է նաև ցարական իշխանությունների կողմից. «Մերս միջնորդութեամբ ընկալաւ ի կայսերէ զպատիւ ասպետութեան»<sup>96</sup>: Առանձնահատուկ ընդգծում են նաև Հայ եկեղեցու օգտին կաթողիկոսի կատարած գործերը՝ նշելով, որ նա «կարկելով զբերանս ոչ միայն ի մէնջ հերձեալ լատինահայոց, այլ և օտարազգի երոպացոց»<sup>97</sup>: Այսքանով հանդերձ մեծ, կարևորություն տալով այդ նշանակմանը՝ նրանք գրում են. «Ձի որպէս նախընթացն Ձեր Եփրեմ սրբազնակատար հայրապետն լուսահոգի ծնողին մերոյ խնդրանօքն էօծ զսա ծայրագոյն վարդապետ, նոյնպէս հաւատամք, թէ Ձերդ ուղղադատ վե-

<sup>92</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 284, թ. 1բ:

<sup>93</sup> Տե՛ս **Շահագիզ Ե.**, Միքայել վարդապետ Մալլանթյան, «Էջմիածին», Սբ. Էջմիածին, 1946, N Բ-Գ, 43:

<sup>94</sup> Տե՛ս ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 54, թ. 1ա:

<sup>95</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 55, թ. 1բ:

<sup>96</sup> Նույն տեղում:

<sup>97</sup> Նույն տեղում:

հապետութիւն մերս միջնորդութեամբ ամբառնայք զսա ի պատիւ եպիսկոպոսութեան՝ ի պատիւ երախտեաց հարիւրամեայ ծառայութեանց տան մերոյ առ ամենայն վիճակաւոր եպիսկոպոսս կողմանցս և առ ազգ մեր ողջոյն»<sup>98</sup>:

Խաչատուր Լազարյանի կողմից հայոց կաթողիկոսին ուղղված ևս մի նամակ կա, որը նա գրել է 1832 թ. սեպտեմբերի 3-ին: Ինչպես երևում է՝ այս անգամ արդեն Լազարյանները միանշանակ չէին պնդում այն, ինչ խնդրել էին կաթողիկոսից նախորդ նամակներում, ինչն անուղղակիորեն կարող է պայմանավորված լինել նաև Սերովբե եպիսկոպոսի ներգործությամբ: Այժմ խոսք էր գնում այն մասին, որ միգուցե ավելի հարմար է, որ եպիսկոպոս օծվելուց հետո նա մնա Էջմիածնում. «Համեմատ ընդ այսմիկ բարութ յոյժ արասջիք ի կիր առնուլ զնա յետ ձեռնադրութեան զամս ինչ իբրու կառավարիչ ուսումնականութեան և միանգամայն կարգադիր զանազան մասանց հոգևորական իրաց նկատմամբ մերումս կրօնի ի վանս իսկ սուրբ Էջմիածնի, ըստ որում՝ այր յարմար և հմուտ ի նմանօրինակ պաշտօնի, ապա թէ ոչ՝ կարգել զնա ի կողմանս այդոսիկ վիճակավոր արքեպիսկոպոս»<sup>99</sup>: Կարելի է, իհարկե, կարծել, թե այժմ այդ էր վարդապետի ցանկությունը, թեև՝ «կամ թէ ի յիշեալ աստիճանի լիցի երկրորդ Ձեր յաջորդ աստ՝ ի Ռուսաստան, քանզի կեանք սորին առանց արժանաւոր պաշտօնի կորիցէ բոլորովին անպտուղ վասն օգտի հասարակաց»<sup>100</sup>: Ամեն դեպքում նշենք, որ Միքայել Սալլանթյանին այդպես էլ բախտ չի վիճակվում մնալ և իր հոգևոր ծառայությունները մատուցել Մայր Աթոռում: Նա, ճիշտ է, 1833 թ. ապրիլի 30-ին ձեռնադրվում է եպիսկոպոս<sup>101</sup>, բայց, որպես նվիրակ, ուղարկվում է Բեսարաբիայի թեմ<sup>102</sup>: Կարելի է, անշուշտ, այդ նշանակումը դիտարկել որպես Սերովբե եպիսկոպոսի բացասական և Բեսարաբիայի թեմակալ առաջնորդ Ներսես Աշտարակեցու դրական վերաբերմունքի հետևանք:

**Ամփոփելով**՝ նշենք, որ Մատենադարանի արխիվային վավերագրերն ուշագրավ և կարևոր լրացումներ են կատարում Միքայել Սալլանթյանի կյանքի և գործունեության որոշ դրվագների բացահայտման և լուսաբանման գործում: Ըստ այդմ՝ նա, ինչպես ուսյալ հայ անվանի այլ հոգևորականներ, կաթոլիկ միջավայրում լավ կրթություն ստանալով և ճա-

<sup>98</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 55, թ. 2 ա:

<sup>99</sup> ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 56, թ. 1 ա:

<sup>100</sup> Նույն տեղում, թ. 1 բ:

<sup>101</sup> Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ., սյունակ 4225:

<sup>102</sup> Տե՛ս **Շահազիզ Ե.**, Միքայել վարդապետ Սալլանթյան, «Էջմիածին», 1946, N Բ-Գ, 46:

նաչում ձեռք բերելով, այդուհանդերձ, իր հետագա ողջ գործունեությունը կապեց Լազարյան ճեմարանի և Հայ եկեղեցու հետ՝ ուրույն հետք թողնելով հայ կրթամշակութային կյանքում:

### **Միքայել Սալլանթյանի մատենագրական ժառանգությունը**

- «Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց», Մոսկով, 1827 թ.
- «Պատասխանիք առ անիրաւ գրպարտութիւնս իմաստակի ուրումն ընդդէմ նոր Քերականութեանն գրաբառ լեզուիս հայոց», Մոսկով, 1828 թ.
- «Մուգայք Արարատեան»<sup>103</sup>, Մոսկով, 1829 թ.
- «Կրօնագիտութիւն քրիստոնէական ըստ ուղղափառ դասնութեան առաքելական եկեղեցոյ Հայաստանեայց», Մոսկով, 1831 թ. Շուշի, 1840 թ.
- «Հրահանգ ճարտասանութեան կամ ճառաբանութեան», Մոսկով, 1836 թ.
- «Պատմութիւն եկեղեցոյն ուղղահաւատ Հայոց», Մոսկով, 1840, 1841 թ., Ս.-Պետերբուրգ, 1862 թ. Վաղարշապատ, 1890 թ.
- «Համառոտ ժամանակագրական պատմութիւն հայոց: Յառաջին ամէ Փրկչին մերոյ մինչ 1836», Իզմիր, 1865 թ.
- «Համառոտութիւն քերականութեան գրաբառ լեզուի հայոց», Շուշի, 1839 թ., 1840 թ., (1854 թ., «Համառոտ քերականութիւն»):

**Հրանտ Ռ. Օհանյան** – հեղինակ է մեկ գրքի և տասնյակից ավելի գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Ամենայն Հայոց կաթողիկոսության՝ 18–19–րդ դարերի պատմությանն առնչվող ամենատարբեր հիմնահարցերը:

**Էլ. փոստ՝** [h.ohanyan@matenadaran.am](mailto:h.ohanyan@matenadaran.am)

---

<sup>103</sup> Լազարյան ճեմարանի սաների ստեղծագործությունների ժողովածուն՝ Միքայել Սալլանթյանի խմբագրությամբ, տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, էջ 17–18:

**MIKAYEL SALLANTYAN: UNKNOWN EPISODES FROM THE  
ACTIVITY OF THE TEACHER OF LAZAREV INSTITUTE**

**Hrant R. Ohanyan**

*Ph.D in History*

Key words – Archival documents of Matenadaran, Lazaryans, Ephrem I Dzorageghtsi, Hovhannes VIII Karbetsi, Nerses Ashtaraketsi, spiritual sphere, educational activity, textbook, bibliography.

The article examines hitherto unexplored episodes in the life and activities of Mikael (Hovakim) Sallantyan (1782-1851). He was the rector (1822-1826) and lecturer (1822-1838) of the Lazarev Institute of Oriental Languages, where he distinguished himself as an outstanding linguist and spiritual leader. The research is based on previously unexamined aspects of his life, drawing on archival documents from the Matenadaran. Based on the study of numerous letters written by the Lazarevs to the Catholicos of All Armenians, Ephrem I, and to the diocesan leader of the Armenian Apostolic Orthodox Church in Georgia, Nerses Ashtaraketsi, the article examines the conversion of a member of the Antonian Catholic Congregation who was invited to the Lazarev Institute in 1822. In particular, it shows that his conversion to Catholicism was motivated solely by the desire to obtain a good education. It is worth noting that when all the conditions for teaching and scientific activity were created at the Lazarev Institute, Mikael Sallantyan no longer felt the need to adhere to the Catholic faith, as evidenced by his numerous letters to Catholicos Ephrem I, Nerses Ashtaraketsi, the Lazarevs, and the diocesan leader of the Armenian Apostolic Orthodox Church in Russia, Archbishop Ioann.

This research sheds light on the obstacles encountered in this matter, in particular the long negotiations between the Lazarevs and Catholicos Ephrem I and the subsequent details of Mikael Sallantyan's journey to Holy Etchmiadzin, about which unique information is preserved in the Matenadaran documents. It turns out that many difficulties encountered during this journey were overcome thanks to the efforts of the Lazarevs. They and Nerses Ashtaraketsi greatly facilitated the favourable outcome of this journey, as a result of which Mikael Sallantyan was ordained a priest (vardapet) of the Armenian Apostolic Church. On the basis of rich documentary material, further episodes of Mikael Sallantyan's spiritual and scientific-pedagogical activity are analyzed, including his tenure as an envoy of the



Holy Etchmiadzin Cathedral, his active role as a lecturer in the seminary, and the creation of an Armenian language textbook. Of course, there is no need to emphasize how important this textbook was for the Armenian educational environment in Tsarist Russia. It should be noted that the exceptional importance of this work was well understood by the Lazarevs themselves, not only in the context of the Lazarev Institute, but also for other Armenian schools.

The article also examines the persecution of the Armenian clergyman by the Tsarist authorities, which was comprehensively supported by the Catholic community, and the Lazarevs' assistance in countering the accusations against Sallantyan. The article also examines the circumstances under which Mikael Sallantyan was ordained a bishop through the Lazarevs' mediation. It is worth noting, however, that Mikael Sallantyan was not destined to remain in the Cathedral of Etchmiadzin. In fact, he was consecrated bishop on April 30, 1833, but was sent to the Bessarabian diocese.

In conclusion, the archival documents of the Matenadaran contribute significantly to the understanding of certain episodes in the life and activity of Mikael Sallantyan. Despite his education and recognition in the Catholic community, he chose to devote all his subsequent activities to the Lazarev Institute and the Armenian Church, leaving a unique mark on Armenian educational and cultural life.

Резюме

## **МИКАЭЛ САЛЛАНТЯН. НЕИЗВЕСТНЫЕ ЭПИЗОДЫ ИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕПОДАВАТЕЛЯ ЛАЗАРЕВСКОГО ИНСТИТУТА**

**Грант Р. Оганян**

*Кандидат исторических наук*

**Ключевые слова** - архивные документы Матенадарана, Лазаревы, Ефрем I Дзорагехци, Ованес VIII Карбеци, Нерсес Аштаракечи, духовная сфера, образовательная деятельность, учебник, библиография.

В статье рассматриваются ранее не изученные эпизоды, связанные с жизнью и деятельностью Микаэла (Овакима) Саллантияна (1782-1851) – ректора (1822-1826) и преподавателя (1822-1838) Лазаревского института восточных языков, где он проявил себя как выдающийся лингвист и духовный деятель. Опираясь на архивные документы Матенадарана, мы исследовали ранее неизученные эпизоды его жизни. По многочисленным письмам Лазаревых Като-

ликозу Всех Армян Ефрему I и епархиальному предводителю Армянской Апостольской Православной Церкви в Грузии Нерсесу Аштаракци, изучается вопрос конверсии члена Антонианской католической конгрегации Ливана, который был приглашен в Лазаревский институт в 1822 г. В частности, оказалось, что его обращение в католическую веру было обусловлено исключительно стремлением получить хорошее образование. Стоит отметить, что, когда в Лазаревском институте были созданы все условия для преподавания и научной деятельности, Микаэл Саллантиян уже не видел необходимости оставаться приверженцем католической веры, о чем свидетельствуют его многочисленные письма к католикозу Ефрему I, Нерсесу Аштаракци, Лазаревым и епархиальному предводителю Армянской Апостольской Православной Церкви в России архиепископу Иоанну.

Данное исследование проливает свет на препятствия, возникшие в этом деле, в частности продолжительные переговоры Лазаревых с католикозом Ефремом I и детали путешествия Микаэла Саллантияна в Св. Эчмиадзин, о котором сохранились уникальные сведения в документах Матенадарана. Выясняется, что многие трудности, возникшие во время этого путешествия, были преодолены благодаря усилиям Лазаревых. Они и Нерсес Аштаракци всесторонне способствовали благоприятному завершению этого путешествия, в результате чего Микаэл Саллантиян получил сан священника (вардапета) Армянской апостольской церкви. На основе богатого документального материала были проанализированы дальнейшие эпизоды духовной и научно-педагогической деятельности Микаэла Саллантияна, в том числе его пребывание в качестве посланника собора Первопрестольного Святого Эчмиадзина, активная деятельность преподавателя в семинарии и создание учебника армянского языка. Конечно же, нет необходимости подчеркивать, насколько важен был учебник для армянской образовательной среды в царской России. Следует отметить, что исключительную важность этой работы прекрасно осознавали сами Лазаревы, не только в контексте процесса обучения в Лазаревском институте, но и для обучения в других армянских школах.

В статье также рассматриваются преследования армянского священнослужителя царскими властями, чему всесторонне способствовала католическая община, и помощь Лазаревых в противостоянии обвинениям в адрес Саллантияна. В статье также изучаются обстоятельства, при которых Микаэл Саллантиян получил сан епископа при посредничестве Лазаревых. Стоит отметить, что Микаэлу Саллантияну не суждено было остаться в Первопрестольном Св. Эчмиадзине. Он в 1833 г. 30 апреля был рукоположен в сан епископа, но был отправлен в Бессарабскую епархию.

В заключение, надо отметить, что архивные документы Матенадарана во многом способствуют раскрытию отдельных эпизодов жизни и деятельности Ми-

каэла Саллантаяна. Несмотря на полученное образование и признание в католической среде, он предпочел всю свою деятельность связать с Лазаревским институтом и Армянской церковью, тем самым оставив уникальный след в армянской образовательной и культурной жизни.

### Օգտագործված գրականություն

1. **Դիլոյան Վ. Ա.**, Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Եր., ԳԱ հրատ., 1966:
2. **Դիլոյան Վ. Ա.**, Լազարյան ճեմարանի հիմնադրման պատմությունից, «ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1961, N 7:
3. **Երիցեան Ալ.**, Պատմություն 75-ամեայ գոյության Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, հատոր Ա. (1824-1850), Թիֆլիս, 1898:
4. **Թադևոսեան Յ.**, Պատմություն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի, Վիեննա, 1953:
5. **Իզնատյան Ա. Հ.**, Լազարյան ճեմարան, Եր., ԵՊՀ հրատ., 1969:
6. **Լեո**, Երկերի ժողովածու, վեցերորդ հատոր, Եր., «Հայաստան» հրատ., 1987:
7. **Հակոբյան Ն. Ա.**, Միքայել արքեպիսկոպոս Սալլանյանի նամակը Ներսես Աշտարակեցուն, Եր., «Պատմություն եւ մշակույթ», N 2 (20), 2023:
8. **Մաղալյան Ա. Վ.** Փաստաթղթեր Արցախի գործիչների և Աբբաս-Միրզայի 1826թ. հանդիպման հետևանքների վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (107), 2006:
9. **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ., Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., 2001:
10. ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 284, թղթ. 155, վավ. 48, 50, 54, 55, թղթ. 156, վավ. 3, 5, 18, 19, 22, 23, 29, 32, 36, 44, 47, 57, 121:
11. ՄՄ, Լազարյանների արխիվ, գործ 5, թղթ. 103, վավ. 233, գործ 11, թղթ. 105, վավ. 67, 69:
12. ՄՄ, Կարոնիկոսական դիվան, թղթ. 45, վավ. 110, թղթ. 48, վավ. 113, թղթ. 51, վավ. 46, 47, 49, թղթ. 55, վավ. 179, 181:
13. **Շահազիզ Ե.**, Միքայել վարդապետ Սալլանյան, «Էջմիածին», 1946, Բ-Գ:
14. **Տաճատ Հ. վրդ. Եարտրմեան**, Անտոնեան հայ Միաբանությունը եւ անոր պատմական տխուր վախճանը 1707-1925, «Բազմավեպ», 2000, N 1-4:
15. **Тунян В. Г.**, Католикос Всех Армян Епрем I Дзорагехци (1809-1830), Св. Эчмиадзин, Изд. Первопрестольного Святого Эчмиадзина, 2018.

### REFERENCES

1. **Matenadaran, Cat’olicos Arkhives**, f. 45, doc. 110, f. 48, doc. 113, f. 51, doc. 46, 47, 49, f. 55, doc. 179, 181 (**In Armenian**).
2. **Matenadaran, Al. Yeritsyan arkhive**, f. 154, doc. 284, f. 155, doc. 48, 50, 54, 55, f. 156., doc. 3, 5, 18, 19, 22, 23, 29, 32, 36, 44, 47, 57, 121 (**In Armenian**).
3. **Matenadaran, Lazariants’ arkhive**, c. 5, f. 103, doc.233, c. 11, f. 105, doc. 67, 69 (**In Armenian**).
4. **Diloyan V. A.**, Lazaryan chemarani himnadrman patmut’yunits’, “HKhSH GA Teghekagir”, 1961, N 7, էջ 55-68 (**In Armenian**).

5. **Diloyan V. A.**, Lazaryanneri hasarakakan k'aghak'akan gortsuneut'yan patmut'yunits' (XVIII dari erkrord kes), Yer., GA hrat., 1966 (**In Armenian**).
6. **Erits'ean Al.**, Patmut'ivn 75-ameay goyutean Nersisean hayots' hogewor dprots'i, vor i T'iflitz, hator A. (1824-1850), T'iflitz, 1898 (**In Armenian**).
7. **Hakobyan N. A.**, Mik'ayel ark'episkopos Sallant'yanı namakē Nerses Ashtaraketsun, "Patmut'yun ew mshakuyt'", N 2 (20), 2023, ēj 187-192 (**In Armenian**).
8. **Ignatyan A. H.**, Lazaryan chemaran, Yer., EPH hrat., 1969 (**In Armenian**).
9. **Leo**, Erkeri zhoghovatsu, hator 6, Yer., "Hayastan" hrat., 1987 (**In Armenian**).
10. **Maghalyan A. V.**, P'astat'ght'er Arts'akhi gortsich'neri yev Abbas-Mirzayi 1826t. handipman hetevank'neri veraberyal, "Banber Hayastani arkhivneri", N 1 (107), 2006, ēj 3-19, Doc N 5 (**In Armenian**).
11. **Maghak'ia ark'. Ormanean**, Azgapatum, hator 2, S. Ējmiatsin, "Mayr At'or S. Ējmiatsin" hrat., 2001 (**In Armenian**).
12. **Maghak'ia ark'. Ormanean**, Azgapatum, hator 3, S. Ejmiatsin, "Mayr At'or S. Ējmiatsin" hrat., 2001 (**In Armenian**).
13. **Shahaziz E.**, Mik'ayel vardapet Sallant'yan, "Ējmiatsin", 1946, N 2-3, ēj 41-47 (**In Armenian**).
14. **Tachat H. vrd. Eartēmean**, Antonean hay Miabanut'ivnē yev anor patmakan tkhur vakhchanē 1707-1925, "Bazmavēp", t'iv 1-4, ēj 110-127 (**In Armenian**).
15. **T'adēosean Y.**, Patmut'ivn Lazarean tohmi yev Lazarean chemarani, Vienna, 1953 (**In Armenian**).
16. **Tunjian V. G.**, Katolikos Vsekh Armian Epem I Dzorageghsi (1809-1830), Sv. Ēchmiadzin, Izd. Perwoprestol'nogo Svjatogo Ēchmiadzina, 2018 (**In Russian**).